

ՅՈՒ. Լ. ՅՈՎՍԵՓՅԱՆ

**ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՂՐԲԵՋԱՆՈՒՄ  
(1918-1990 թվականներ)**

1917թ. փետրվարյան հեղափոխությունը նոր իրավիճակ ստեղծեց Ռուսական կայսրության ազգային ծայրամասերում: Ավելի բուռն գործունեություն ծավալեցին տեղի կուսակցությունները: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր նպատակներն ու ծրագրերը: Բացառություն չէր նաև դեռևս 1911թ. ստեղծված աղբյուրական մուսավաթ կուսակցությունը, որը 1917թ. ապրիլին Բաքվում կայացած Կովկասի մահմեդականների առաջին կոնգրեսում պահանջեց «Ռուսաստանի կազմակերպությունը դնել հողային-դաշնակցային հիման վրա և ստեղծել Ռուսաստանի մահմեդականությունը ներկայացնող կենտրոնական օրենսդիր մարմին»<sup>1</sup>:

1917թ. հունիս-օգոստոս ամիսներին Բաքվում տեղի ունեցած երկրորդ և երրորդ կոնգրեսներն ընդունեցին էլ ավելի խիստ պանթուրքիստական որոշումներ: Դա պատահական չէր, քանզի Անդրկովկասում պանթուրքիզմի ջատագովը և անմիջական իրականացնող մուսավաթն էր, որի հետ թուրքական կառավարող շրջանները և քաղաքական գործիչները մեծ հույսեր էին կապում: Անդրկովկասի՝ թաթարներով բնակեցված տարածքները կարևոր հենարան էին իրենց պաշտոնական գաղափարախոսության և քաղաքականության տարածման համար:

Ժամանակին պանթուրքիզմի հիմնադիրներից և գաղափարախոսներից Ջիա Գեոք Ալիը գրում էր, որ Թուրքիան, Աղբյուրականը և Իրանական

<sup>1</sup> Ջարևանդ, Մրաչյալ, անկախ Թուրանիա, Երևան, 1993, էջ 100-101:

Աղբյուրականը պետք է կազմեն վաղվա Օդուգիստանը<sup>1</sup>: Նրա կարծիքով դա պանթուրքիզմի «միևնույն ծրագիրն է»<sup>2</sup>:

Մուսավաթականների ախորժակն էլ ավելի գրգռվեց, երբ թուրքական գործերը, խախտելով Երզնկայի զինադադարը, սկսեցին իրենց առաջ-խաղացումը Արևմտյան Հայաստանում (գրավեցին Երզնկան, Մամախաթունը, Սարիղամիշը, Կարսը, ընդհուպ մոտեցան Անդրկովկասի սահմաններին):

Մուսավաթական, խանական, բեկական ուժերը փակեցին Բաքու-Թիֆլիս երկաթուղին՝ կտրելով կապը Ռուսաստանի հետ: Այնուհետև դադարեցվեց երթևեկությունը Բաքու-Գրոզնի երկաթուղով: Աղբյուրական զինված ուժերը քայքայիչ աշխատանք էին կատարում նաև թիկունքում, ամեն կերպ նպաստավոր դարձնելով իրենց «ազգակից եղբայրների»՝ թուրքերի մուտքը Անդրկովկաս: Մեյմի մուսավաթական պատգամավորներն էլ իրենց տեղերում էին լայն քարոզչություն տանում հոգուտ Թուրքիայի:

Աղբյուրականական ազգայնականները հնարավոր էին համարում Թուրքիայի միջոցով մեծ թուրքական պետության ստեղծումը, որը պիտի ընդգրկեր Միջերկրական ու Սև ծովերի ափերից մինչև Անդրկասպյան շրջաններ ու Թուրքեստան: Լայն գործունեություն էր ծավալում նաև մահմեդական հոգևորականությունը, որը, սուլթանին համարելով խալիֆների ժառանգորդը, ուստի նաև ամբողջ մահմեդական աշխարհի հոգևոր առաջնորդը, փորձում էր ավելի կազմակերպված բնույթ ստալ հակաքրիստոնեական պայքարին:

Մուսավաթականները քայքայիչ աշխատանք էին ձեռնարկում Անդրկովկասյան Մեյմում: Նման գործունեությունը ավելի շեշտակի զգացվեց Տրապիզոնի և Բաթումի բանակցությունների ժամանակ: Այդ քաղաքականությունն ավելի բարդացրեց երկրամասի պաշտպանությունը հարձակվող թուրքական բանակներից:

Անդրկովկասյան դեմոկրատական դաշնակցային հանրապետության հռչակումից հետո թաթար ազգայնականներն այլևս չէին քաքցնում իրենց հեռագնա նպատակները: Պանթուրքիզմի կատարի պաշտպաններից մեկը՝ մուսավաթական Ռասուլ Չադեն հայտարարում էր, որ Կասպից ծովը պետք է հանդիսանա իրենց «ներքին լիճը»<sup>3</sup>:

<sup>1</sup> Зареванд, Турция и пантуранизм, Париж, 1930, с. 92.

<sup>2</sup> Տե՛ս նույն փոփոխում:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության պարտության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև ՀՀ ԴԿՊԱ), ֆ. 121, ց. 1, գ. 33, ք. 17:

1918թ. մայիսի 26-ին վրաց ազգային խորհուրդը հռչակեց Վրաստանի անկախությունը: Հաջորդ օրը նույն քայլին դիմեցին մուսավաթականները: Նրանք նախկին ցարական Ռուսաստանի, Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների տարածքը հռչակեցին Ադրբեջան պետություն, որը մնան անվամբ երբեք գոյություն չէր ունեցել նշված տարածքում:

Պետության անվան ընտրությունը պատահական չէր և հետապնդում էր քաղաքական ու ռազմավարական հեռագնա նպատակներ: Այն մուսավաթականներին առաջարկել էր, այսպես կոչված, Կովկասյան իսլամական բանակի հրամանատար Նուրի փաշան, որպեսզի կովկասյան թաթարներն իրենց իրավունքները ներկայացնեն նաև Ատրպատականի կամ Իրանական Ադրբեջանի նկատմամբ:

Նորաստեղծ պետության մայրաքաղաքը ժամանակավորապես դարձավ Գանձակը, քանզի 1917թ. նոյեմբերի 2-ին Բաքվում հաստատվել էր խորհրդային իշխանություն: Ադրբեջանում իշխանության գլուխ անցավ մուսավաթը, ընտրվեց կառավարություն՝ Ֆ. Խան-Խոյսկու նախագահությամբ:

Այն օրերին, երբ Անդրկովկասյան Սեյմը կանգնած էր լուծարման առաջ, Հայկական կորպուսի ուժերը և հայ աշխարհագրայինները կենաց ու մահու կռիվներ էին մղում Հայաստան ներխուժած թուրքական բանակների դեմ: Վերջիններս փորձում էին մի քանի ուղղություններով շարժվել դեպի Թիֆլիս, Գանձակ և Բաքու՝ իրականացնելու իրենց վաղեմի ծրագրերն ու նվաճել Անդրկովկասը, սրի քաշել նաև ցեղասպանությունից փրկված արևմտահայության բեկորներին և արևելահայությանը: Սակայն հայ ժողովուրդը Սարդարապատում, Բաշ Ապարանում, Գարաքիլիսայում պարտության մատնելով թուրքական զորքերին, նվաճեց իր ապրելու իրավունքը և 1918թ. մայիսի 28-ին հայտարարեց նոր հայկական պետության ստեղծման մասին: 1918թ. հունիսի 4-ին Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, բայց և չիրաժարվեց իր պանթուրքիստական ծրագրերից:

1918թ. օգոստոսի 31-ին Խալիլ փաշան, Երևանում ընդունելության ժամանակ հայտարարեց, որ թուրքերի բարձրագույն նպատակը վերամիավորվելն է մայր հայրենիքի՝ Թուրանի հետ, ուստի և նրանք ձգտում էին վերացնել իրենց ճանապարհին առաջացած խոչընդոտները՝:

Թուրքերը նաև նպատակ էին հետապնդում թուրքամետ պետություն

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 619, ք. 47-48:

ստեղծել Կովկասում: Էնվերը ցանկանում էր Ադրբեջանի, Դաղստանի և Հայաստանի հիման վրա ստեղծել նոր պետություն և այդ գործում նրան պետք է օգներ իր եղբայրը՝ Նուրի փաշանը՝:

Բաթումի պայմանագիրը լայն հնարավորություն ընձեռեց թուրքական զորքերին գրեթե անարգել շարժվել դեպի նորաստեղծ Ադրբեջան, չնայած որ թուրքական կանոնավոր զորքերի առաջապահ ջոկատները մայիսի վերջերին արդեն հասել էին Գանձակ, ուր ժամանել էր նաև Նուրի փաշան: Թուրքական զորքերի մուտքը Ադրբեջան՝ քաջալերեց թաթարներին, որոնք սկսեցին հարձակումներ գործել հայկական գյուղերի վրա, սրի քաշել հայ ազգաբնակչությանը: Բազմաթիվ հայ բանվորներ, որոնք աշխատում էին Գետաբեկի պղնձահանքերում, մորթվեցին հարևան գյուղերի թաթարների կողմից: Փակվեց Գետաբեկ-Շամխոր ճանապարհը: Տեղական բեկերի անմիջական մասնակցությամբ, թաթարական ջոկատները և խաժամուժը սկսեցին հարձակումներ գործել Շամխորի հայկական գյուղերի վրա՝ կոտորածներ սարքելու և թալանի նպատակով: Չարդախլուի, Բադաքենդի, Բարսումի, Գառնակերի, Ջազիրի, Սալերի և մյուս փոքր գյուղերի ազգաբնակչությունը, ինքնապաշտպանության համար դիմեց զենքի: Նրանք ստեղծեցին 500 հոգուց բաղկացած հեծյալ ջոկատ, որն անվերջ շրջելով հայկական գյուղերում, կանխում էր քչնամու անակնկալ հարձակումները: Թաթարներին չհաջողվեց տեղահան անել և կոտորել տեղի հայ ազգաբնակչությանը: Երբ Նուրի փաշան ժամանեց Ջեզամ գյուղը, տեղի թաթարները առաջարկեցին զրափել հայկական գյուղերը: Հայկական ինքնապաշտպանության ղեկավարները կանչվեցին Ջեզամ, սակայն որոշ ժամանակ անց ազատ արձակվեցին և հետ վերադարձան:

Ֆ. Խան-Խոյսկու կառավարությունը ոչ միայն չէր կանխում հայերի կոտորածները, այլև ինքն էր ծրագրում ու ղեկավարում զորքի և թաթարական խուժանի գործողությունները: Անելանելի վիճակում էր գտնվում Գանձակի և հարևան հայկական բնակավայրերի հայ բնակչությունը: Թուրքերի Գանձակ ժամանելուց հետո վիճակը ավելի ծանրացավ, քանզի վերջիններս, միանալով տեղական ուժերին՝ թալանի նպատակով կազմակերպում էին ջարդեր: Գանձակի հայկական թաղամասերի բնակիչները գտնվում էին կազմակերպված հարձակման և կոտորածի սպառնալիքի տակ: Առանձին, հայ մարդկանց սպանությունները, խա-

1 М. Кемаль, Путь новой Турции, т. III, Москва, 1934, с. 265.

մութների և տների թալանը դարձել էին առօրյա, սովորական երևույթ: Թուրքական բանակի հրամանատար Նուրի փաշան հրամայում է շրջապատել հայկական թաղամասերը և զինաթափել բոլոր հայերին: «Հայերին գրավոր զգուշացում արվեց, - գրում է Ռեյուշտու բեկը, - անհապաղ հավաքել զենքերը և հանձնել թուրքերին, հակառակ դեպքում տեղն ու տեղը կզնդակահարվեն նրանք, ում մոտ կհայտնաբերվեր զենքը»<sup>1</sup>: Նմանատիպ առաջարկով Վրաստանում Հայաստանի Հանրապետության հավատարմատարին է դիմում Աղքեջանի դիվանագիտական ներկայացուցիչը<sup>2</sup>:

Հայության զինաթափումը մի նպատակ էր հետապնդում. զրկել նրանց ինքնապաշտպանության հնարավորությունից և ավելի դյուրին դարձնել կոտորածը: Արխիվային նյութերը փաստում են, որ հայ ազգաբնակչությունը, գիտակցելով իր գլխին կախված վտանգը, չի հանձնում զենքը: Հայկական թաղամասերը ենթարկվում են հարձակման: Այդ է վկայում մարտերին մասնակցած մի թուրք սպա, որը գրում է. «Այսօրվա մարտերում մեր կորուստները կազմեցին 13 սպանված և 6 վիրավոր, սպանվածների թվում էր մաս մեկ սպա»<sup>3</sup>: Իսլամական բանակի հրամանատարի հրամանով հայկական թաղամասերը ենթարկվեցին հրետակոծության<sup>4</sup>: Ռազմական հաղորդագրություններից մենք տեղեկանում ենք, թե հեծյալ գնդի հրամանատարը որքան փամփուշտ և արկ է օգտագործել հայերի դեմ՝ հրամանը կատարելու համար: 1918թ. հունիսի 15-ից իսլամական բանակի հրամանատարությունը սկսեց իր ռազմական գործողությունները Բաքվի ուղղությամբ: Թուրքական 5-րդ և 15-րդ դիվիզիաներին էին միացել աղբյուրական գործերը: Նրանց հետևից, ինչպես ընդունված էր, շարժվում էր թաթարական խուժանը՝ գրավված տարածքներում թալանն իրականացնելու համար:

Գանձակից եկած թաթարները, Շամախու ճանապարհին այրելով հայկական գյուղերը և տեղերում մնացած հայերին կոտորելով, հասան քաղաք: Նրանք գերի վերցրեցին սպանդից ազատված 30 հայկական ընտանիք և մեծ ավարով հետ վերադարձան Գանձակ: Բաքվի ճանապարհին թուրքական բանակը և տեղի մահմեդականությունը կողոպտեցին, սրի քաշեցին Նուխիի, Արեշի, Գյոքչայի տասնյակ հազար հայերի:

1 ՀՀ ՊԿՊԱ, Հավաքածու, գ.112, ք.31:

2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.17, ք.30:

3 ՀՀ ՊԿՊԱ, Հավաքածու, գ.112, ք.18:

4 Նույն տեղում, ք.32:

Քչերը, որոնք մի կերպ փրկվել էին կոտորածից և փորձում էին անցնել Վրաստան, ստիպված պատսպարվեցին սահմանամերձ շրջաններում, քանի որ մենչևիկյան կառավարությունը՝ փակելով սահմանը, արգելեց նրանց մուտքը իր հանրապետություն<sup>1</sup>: 1918թ. հունիսի 27-ից սկսվեցին արյունալի մարտեր Բաքվի բանվորների պատգամավորների խորհրդի զինված ուժերի և թուրք-թաթարական զորքերի միջև: Ուժերը անհավասար էին: Եթե թուրքերը և թաթարները ստանում էին նոր համալրում, ապա Բաքվի խորհուրդը զուրկ էր այդ օգնությունից: Շուտով դավաճանեց և իր զորքով ճակատը լքեց գնդապետ Բիշերախովը: Ծակատը պահելու համար Բաքվի խորհուրդը, ձայների մեծամասնությամբ, որոշեց Պարսկաստանից Բաքու հրավիրել անգլիացիներին: Խորհրդի բոշևիկյան ֆրակցիան հրաժարական տվեց և դուրս եկավ խորհրդի կազմից: Իշխանությունը անցավ Յենտրոկասայի կառավարությանը: Վերջինս մույնպես չկարողացավ մինչև վերջ պաշտպանել Բաքուն: Բաքվի անկումից մի քանի ժամ առաջ անգլիական զորքերը՝ գեներալ Դեմստերվիլի գլխավորությամբ, ռազմաճակատով հեռացան քաղաքից:

1918թ. սեպտեմբերի 15-ին թուրք-թաթարական զորքերը գրավեցին Բաքուն: Նույն օրն էլ սկսվեց Բաքվի հայության կոտորածը: Ահա թե ինչ է գրում այդ մասին Բ. Իշխանյանը. «Երեք օր շարունակ, սեպտեմբերի 15-ի առավոտից մինչև 17-ը երեկոյան՝ կիրակի, երկուշաբթի և երեքշաբթի, քաղաքի նոր տերերն էին համարվում արևախում կազմակերպությունները, բազմաթիվ և բազմազան ավազակների ու ջարդարարների բանդաները՝ կազմված թուրքական կանոնավոր զորքերից և քաղաքի ու շրջակա գյուղերի մուսուլմանական տարրերից<sup>2</sup>: Բաքվում հայկական կոտորածների կազմակերպիչներն ու ոգեշնչողներն էին թուրքական զորքերի հրամանատարներ՝ Ֆ. Խան-Խոյսկին և Ջևանշիր խանը: Այդ վայրագները որոշել էին «նախօրոք նախատեսված պլանի համաձայն, բանդաների և ջարդարարների ողորմածությամբ թողնել քաղաքի ու նրա շրջակայքի ամբողջ հայության կյանքն ու ինչքը: Թո՛ղ մորթեն և ջարդեն որքան կարող են, թո՛ղ առևանգեն և բռնանան, թալանեն ու կողոպտեն: Դա նրանց թույլ է տրվում և նրանց է թողնված՝ իրենց էներգիային ու հնարավորությանը համապատասխան»<sup>3</sup>: Հայերի ցեղասպանությունն

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ.121, ց.1, գ.26, ք.16-18:

2 Բ. Իշխանյան, Բաքվի մեծ տարասիները, Թիֆլիս, 1920, էջ 6:

3 Բ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 6:

իրականացվում է այն նույն եղանակով, որ կատարվել էր Արևմտյան և Արևելյան Հայաստանում, Ադրբեջանի մի շարք շրջաններում: Կատարողներն արդեն ունեին «մեծ փորձ»: Բաքվի հայության սպանդի տեսարանները չեն տարբերվում XIX դարի 90-ական թվականների կոտորածներից: Անօգնական բնակչությունը՝ հայ ժողովուրդը, «մինչև վերջին թելը կողոպտվեց ու քայքայվեց, ենթարկվեց բռնության և ոտքի տակ տրվեց, անարգվեցին մարդկային ամենատարրական իրավունքներն ու ընտանեկան սրբությունները, գերեվարվեցին և անհայտ կորան հազարավոր մարդիկ...»<sup>1</sup>: Բաքվի հայության եղեռնագործությանը զոհ գնաց 30 հազար մարդ: Բաքվի հայոց ազգային խորհրդի տվյալներով, մինչև 1918թ. սեպտեմբերյան ջարդերը քաղաքի 88.673 հայերից տուժել է 52.822 մարդ, որը կազմում է ընդհանուր թվի 59,57%-ը<sup>2</sup>: Եվ կարծեք թե Բաքվում ոչինչ տեղի չէր ունեցել: Սեպտեմբերի 19-ին կառավարության մախագահը դիմում է ամբողջ բնակչությանը և հայտարարում, որ Ադրբեջանում ապրող բոլոր քաղաքացիները, անկախ հավատքից և ազգային պատկանելությունից, պետք է օգտվեն հավասար իրավունքներից և ինքը հավասարապես պարտավոր է պաշտպանել և երաշխավորել բոլոր քաղաքացիների կյանքի, ինչքի և իրավունքի անձեռնմխելիությունը: Տիեզերքի հասնող նման հայտարարությունները բազմիցս կինչեն այս պետության և նրա ժառանգորդ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարների շուրթերից:

Շուտով Անդրկովկասում թուրքերին փոխարինելու եկան անգլիացիները: Վերջիններս, երկրամասում առաջնորդվելով իրենց քաղաքական և տնտեսական շահերով, պաշտպանության տակ վերցրեցին Ադրբեջանին: Անգլիացիների գալստյամբ Ադրբեջանի հայ բնակչության ցեղասպանությունը չդադարեցվեց: Դեռ ավելին, նրանց անմիջական մասնակցությամբ Խոսրով Բեկ Մուլթանովը նշանակվեց Ղարաբաղի և Չանգեզուրի գեներալ նահանգապետ: Այդ հայկական երկրամասերը, որոնց ազգաբնակչության 95%-ից ավելին տեղաբնակ հայեր էին, սկսած 1918 թվականից կենաց ու մահու կոնիվներ էին մղում թուրք-թաթարական միացյալ ուժերի դեմ: Արխիվային բազմաթիվ վավերագրեր ապացուցում են, որ Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը չէր հրաժարվել պանթուրքիստական նկրտումներից և պատրաստ էր շարունակ

կել հայերի ցեղասպանությունն իր տարածքում:

Բաքվի արյունալի դեպքերից հետո նախապատրաստվում էին Գանձակ, Շամախի, Նուխի քաղաքների և Ադրբեջանի հայկական գյուղերի հայության կոտորածները: Դաճապարհները դարձել էին խիստ անպահով: Հայազգի ուղևորները իջեցվում էին գնացքներից և հոշոտվում: Հայկական դիվիզիայի հրամանատարին հաղորդում էին, որ Ելիզավետպոլի գավառի Չարդախլու գյուղի բնակիչները հայտնում են Ադրբեջանում ընթացող մեծ զորակոչի մասին, որը նպատակ է հետապնդում Հայկական այդ լեռնաշխարհի մաքրումը հայերից՝ Գետաշենից մինչև Բաղաբենդ<sup>3</sup>: Տվյալ ժամանակաշրջանում այս տարածքում կար 40-ից ավելի հայկական գյուղ: Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը 1919թ. ամռանը հաղորդում է, որ գավառներում և Բաքվում կառավարության կողմից տարվում է հակահայկական պրոպագանդա, որը կարող է վերածել տեղի հայերի կազմակերպված կոտորածների<sup>4</sup>: Դրա արդյունքում սկսվեցին ազգաբնակչության նոր կոտորածներն ու բռնագաղթը: Միայն Ելիզավետպոլի գավառում այրվեցին 13 հայկական գյուղեր, որոնց ազգաբնակչության մի մասն անողորմ հոշոտվեց, իսկ կենդանի մնացածները տեղահան արվեցին<sup>4</sup>:

Նման ծանր կացություն էր ստեղծվել նաև Նուխիի, Արեշի, Շամախու գավառներում<sup>5</sup>:

Հայ ազգաբնակչության՝ կազմակերպված զանգվածային կոտորածներ տեղի ունեցան Շուշիում (1920թ. մարտի 22-ի լույս 23-ի գիշերը): Այն նույնպես կազմակերպված էր Ադրբեջանի կառավարության կողմից: Կոտորածին զոհ գնացին 30 հազար հայեր: Բացի թաթարական խաժամուժից, այդ կոտորածին մասնակցում էին և կանոնավոր զորքեր:

Ինչպես տեսանք, 1918-1920թթ. հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում նախապատրաստել և իրականացնում էր կառավարությունը, որին սկզբում աջակցում էր Թուրքիան, ապա՝ Անդրկովկասում գտնվող անգլիական զինվորական հրամանատարությունը: Ադրբեջանում հայերի ցեղասպանության եղանակը նույնն էր, ինչ Արևմտյան Հայաստանում՝ կոտորած, թալան, տեղահանություն: Կառավարության ծրագիրը

1 «Մշակ», 1918, 22 հոկտեմբերի:

2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, ք. 90:

3 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, ք. 12:

4 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 278, ց. 1, գ. 14, ք. 87-89:

5 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 44, ք. 107:

1 Նույն տեղում, էջ 7:

2 Տիս Ի. Մոսկովս, Ա Հովնանյան, Բաքվի ջարդերը, Երևան, 1992, էջ 68:

իրականացնում էին կանոնավոր գորքերը, խանական, բեկական ջուկատները, հակահայկական մոլեռանդությամբ «տոգորված» քաթար և մյուս մահմեդական ազգաբնակչությունը:

Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում հետապնդում էր քաղաքական, տնտեսական, կրոնական նպատակներ: Մուսավաթական Ադրբեջանի պաշտոնական գաղափարախոսությունը պանթուրքիզմն էր: Եվ բնական էր, որ այդ գաղափարախոսության հիմնադիրներից էին Ջեյնալ Թադիևը, Ալի Հուսեյն Ջադեհ, Ահմեդ Աղաևը, Ալի Մարդան Թոփչիբաշևը: Նրանցից մի քանիսը բուն գործունեություն էին ծավալել նաև Օսմանյան կայսրության սահմաններում: Այդ գաղափարախոսությունը որդեգրեցին երիտթուրքերը, և այն դարձավ նրանց պաշտոնական գաղափարախոսությունը:

Առաջին աշխարհամարտը լայն հնարավորություն ընձեռեց պանթուրքիզմի գաղափարները կյանքի կոչելու համար: Նրա ճանապարհին կանգնած էր հայ ժողովուրդը՝ իր պատմական Հայրենիքով: 1915-1918թթ. արևմտահայության ցեղասպանությամբ և բռնագաղթով վերացվեց առաջին խոչընդոտը մեծ Թուրանի ճանապարհին: Հաջորդ արգելքը՝ Արևելյան Հայաստանն էր, որը սեպի պես խրված էր Թուրքիայի և Կովկասի մահմեդականության միջև: Թուրքերը մեծ ջանքեր քափեցին վերացնելու նաև այդ արգելքը, սակայն միջազգային և քաղաքական հանգամանքների բերումով, ստիպված էին ճանաչել նորաստեղծ Հայաստանի Հանրապետության գոյությունը:

Ադրբեջանի քաղաքական գործիչները և կառավարող շրջանները շատ լավ գիտակցում էին, որ այն տարածքներում, որտեղ ստեղծեցին իրենց պետականությունը, երբեք այդ անվամբ պետություն չի եղել և, որ այդ տարածքները երբեք իրենց չեն պատկանել: Այդ առումով նրանց պետականությունը Թուրանի կազմում կարող էր ապահովել իրենց «ազգակից և կրոնակից» Թուրքիան: Երբ Նուրի փաշան հասավ Գանձակ, Ադրբեջանի կառավարությունը ճոխ ընդունելություն կազմակերպեց: Գանձակի մզկիթներից մեկում Ադրբեջանի կառավարության նախագահ Խան-Խոյսկին՝ ողջունելով Նուրի փաշային և թուրքական զորքի մուտքը հանրապետություն, ասաց. «Վերջապես Ադրբեջանի թրքությունը հասնում է իր նպատակին, նա մտնում է իր սիրելի Օսմանյան խալիֆաթի գիրկը: Վերջապես իրականանում է համայն մահմեդականության դարավոր իդեալը՝ բոլորի միացումը սուլթանի կանաչ դրոշակի տակ: Տաճիկ ազատարար գործե-

րին սպասում են Կովկասի լեռնականները, Թաթարիստանի քաթարներն ու կիրգիզները, Անդրկովկասի մահմեդականները: Կեցցե օսմանյան բանակը, կեցցե՝ համայն միացած մահմեդականությունը»<sup>1</sup>:

Ինչպես նշեցինք, Թուրանի ճանապարհին, ի դեմս Հայաստանի և հայության, կար մի մեծ խոչընդոտ: Ադրբեջանը գրկված էր Թուրքիայի հետ անմիջական սահմանից և կապից: Եվ պատահական չէր այն հանգամանքը, որ Ադրբեջանն իր ստեղծման առաջին օրերից մեծ տարածքային պահանջները ներկայացրեց Հայաստանի Հանրապետությանը: Թուրքիայի հետ կապվելու համար Ադրբեջանը Հայաստանից պահանջում էր ամբողջ Ելիզավետպոլի նահանգը՝ բովանդակ Արցախով և Ջանգեզուրով, Երևանի նահանգից՝ Նախիջևանն ու Շարուրը, Երևանի և Էջմիածնի գավառներից՝ Մաղարակի, Վեդիբասարի, Ջանգիբասարի շրջանները, Արաքսի աջ ափը, Մասիսի ստորոտներով՝ ամբողջ Սուրմալուն մինչև Կարսի մարզը: Բացի վերը նշվածից՝ Սևանա լճի հյուսիսային ափերը, Բասարգեշարը: Ռուբեն Տեր-Մինասյանի հաշվումներով՝ Ադրբեջանը Հայաստանից պահանջում էր 50.520 քառակուսի կմ տարածք<sup>2</sup>: Իր նպատակներին հասնելու համար Ադրբեջանի կառավարությունը՝ տեղի մահմեդականների միջոցով ապստամբություններ էր կազմակերպում Հայաստանի Հանրապետության կառավարության դեմ:

Թուրքիայի և Ադրբեջանի հիմնական՝ պանթուրքիստական նպատակն ամբողջ Կովկասի գրավումն ու թուրքացումն էր: Այդ նպատակին հասնելը այնքան էլ դյուրին չէր: Մահմեդականները կազմում էին Անդրկովկասի ազգաբնակչության մեկ երրորդը: Երիտթուրքերը սեփական հասնել և իրենց ծրագիրն իրականացնել մի ամբողջ ժողովրդի ցեղասպանությամբ: Հայերի թվաքանակը Ադրբեջանում մոտ 500 հազար էր, որը հանրապետության ամբողջ ազգաբնակչության մեկ քառորդն էր կազմում: Հայերի ֆիզիկական ոչնչացմամբ Ադրբեջանի կառավարող շրջանները փորձում էին հասնել հանրապետության ազգաբնակչության միատարրության: Հայության ոչնչացումը հետապնդում էր մի նպատակ, որ նրանք այլևս չէին հավակնի և պայքարի իրենց պատմական տարածքների համար: Հայության ցեղասպանությամբ կոչնչաց-

<sup>1</sup> Ս. Մելիք-Յուլյան, Բարվի հերոսամարտերեն, «Հայրենիք», ամսագիր, 1925, N 9, էջ 68:

<sup>2</sup> Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշարակները, հ. Է, Թեհրան, 1982, էջ 184:

վին և նրա ճարտարապետական ու մշակութային արժեքները՝ տարածքների պատկանելության իրական վկայությունները:

XIX դարի 70-ական թվականներից Ադրկովկասը ևս ընդգրկվեց կապիտալիզմի զարգացման ոլորտը: Բաքուն, որն այդ ժամանակ դարձել էր հայության հասարակական, մշակութային և տնտեսական կարևորագույն կենտրոններից մեկը, Անդրկովկասում՝ կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով, հայ բուրժուազիայի հետևողական գործունեության շնորհիվ, դարձավ հայկական կապիտալի կուտակման ամենահիմնական կենտրոնը: Բաքվի նավթահորերի մի զգալի մասը պատկանում էր հայ արդյունաբերողներին: Նշանակալի էր հայ բուրժուազիայի մասնակցությունը արդյունաբերության մի շարք ճյուղերում, արտաքին և ներքին առևտրում:

Ի դեմս հայ բուրժուազիայի, մահմեդական բուրժուական շրջանները տեսնում էին լուրջ մրցակցի: Նրանցից ազատվելու միակ ճանապարհը նրանց ֆիզիկական բնաջնջումն էր: Իրենց ճանապարհից հեռացնելով հայ արդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչներին, առանց մեծ ջանքերի, իրենք դառնում էին միլիոնների հասնող կապիտալի տերն ու տնօրենը:

Հայ բուրժուազիայի ֆիզիկական ոչնչացումը ուներ նաև կանխարգելիչ դեր. վերջիններս չէին ֆինանսավորի և ղեկավարի հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը:

Տնտեսական մյուս գործոնը սերտ կապված էր այն հանգամանքի հետ, որ տեղի մահմեդական ազգաբնակչության գերակշիռ մասը թոչվոր անասնապահներն էին: Այդ ժամանակաշրջանում, բացի քաղաքային հայ ազգաբնակչությունից, նրա հիմնական մասը՝ բազմաթիվ հանգամանքներից ելնելով, հիմնականում բնակվում էր նախալեռնային և լեռնային գոտիներում: Գյուղի հայ ազգաբնակչության կոտորածները թոչվոր մահմեդականներին հնարավորություն էին ընձեռում տիրանալ նոր արտադրարկերի, մեծ քանակության հասնող անասնահոտերի:

Ղաշտային շրջաններում մահմեդական ազգաբնակչությունը, հայերի կոտորածով, ձեռք էր բերում հարուստ գյուղեր ու շեներ և նոր վարելահողեր: Բացի այդ, հայերի կոտորածները և թալանը մահմեդական ազգաբնակչությանը դարձնում էին որոշակի հարստության տեր:

Աղբրեջանում հայերի բնաջնջման քաղաքականությունը որոշակիորեն կապված էր կրոնական գործոնի հետ: Պատահական չէր, որ հակահայկական քարոզչությունում մեծ նշանակություն էր ստանում մահմե-

դական հոգևորականության քարոզչությունը: Մուլթանին համարելով իրենց, այսինքն՝ բովանդակ մահմեդականության, միակ քարձրագույն հոգևոր առաջնորդը, մուլաները կանգ չէին առնում ոչնչի առաջ և ձգտում էին օժանդակել մեծ թուրանական պետության ստեղծմանը և հաստատմանը: Նրանք իրենց հարուստ փորձից գիտեին, որ դժվար է հայությանը դավանափոխ անել, ուստի քրիստոնյաների և քրիստոնեության վերացումը իրենց տարածքում տեսնում էին նրանց բնաջնջման մեջ: Մահմեդական ազգաբնակչության կրոնական մոլեռանդությունը առաջնային գործոն էր հայության ցեղասպանության ճանապարհին:

1920թ. ապրիլին Աղբրեջանը խորհրդայնացվեց: Մուսավաթականներին փոխարինեցին աղբրեջանական բուլշևիկները: Իրականում փոխվեց միայն հանրապետության ցուցանակը և Աղբրեջանի Հանրապետությունը վերանվանվեց Խորհրդային Աղբրեջան: Երեկվա մուսավաթականներից շատերը զբաղեցրեցին բարձր պաշտոններ: Նախկին բանակը, որի միջոցով կառավարությունը չհայտարարված պատերազմ էր մղում Հայաստանի դեմ և իր տարածքում իրականացնում հայերի ցեղասպանությունը, դարձավ Աղբրեջանի կարմիր բանակ, շարունակելով իր սև գործը հայ ազգաբնակչության նկատմամբ: Պանթուրքիզմի գաղափարախոսությանը և քաղաքականությանը փոխարինելու եկան նոր գաղափարախոսություն և քաղաքականություն, համաշխարհային հեղափոխության գնորդը: Խորհրդային Ռուսաստանը չկարողացավ ռուսական հեղափոխությունը արտահանել Արևմտյան Եվրոպա և իրականացնել համաշխարհային հեղափոխություն: Նրա իրականացման ուղղությունը տեղափոխվեց դեպի Արևելք: Այստեղ այն իրականացնելու համար անհրաժեշտ էր ուժեղ հեմարան: Քանզի Անդրկովկասում առաջինը խորհրդայնացվել էր Աղբրեջանը, ուստի այն էլ դարձավ այդ հեմարանը: Ինչպես պանթուրքիզմի, այնպես էլ համաշխարհային հեղափոխության ճանապարհին, խոչընդոտ էր հանդիսանում Հայաստանը և հայ ժողովուրդը: Այս անգամ էլ Հայաստանը և հայությունը պետք է գոհարելով էին համաշխարհային հեղափոխության գաղափարին և նրա իրականացմանը:

Աղբրեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ նրա Հեղկոմը, ապա նաև 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը, Հայաստանից պահանջեցին Ղարաբաղից, Ջանգեզուրից, Նախիջևանից դուրս բերել հայկական զորքերը: 1920թ. ամռանը խորհրդային զորքերը սկսեցին այդ երկրամասերի գրավումը: Այդ շրջանների հայ ազգաբնակ-

չությունը նորից հայտնվեց կոտորածի սպառնալիքի առաջ: Ադրբեջանական զինվորները, որոնք այժմ դարձել էին կարմիր ասկյարներ, 11-րդ բանակի ստորաբաժանումների հետ, սկսեցին ռմբակոծել Ղարաբաղի, Ջանգեզուրի հայկական բնակավայրերը, սկսվեց ժողովրդի կողոպուտը և կոտորածը:

Շուտով նրանց միացան քեմալականները, որոնք պատերազմ սկսեցին Հայաստանի դեմ: Բռնությունները այնպիսի ահավոր բնույթ էին կրում, որ ապստամբեցին և՛ Ջանգեզուրը և՛ Ղարաբաղը: Սակայն խորհրդա-քեմալական ագրեսիայի հետևանքով, շուտով Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր:

Խորհրդային Ադրբեջանի հեղկոմը, ելնելով որոշակի քաղաքական նկատառումներից, 1920 թ. նոյեմբերի 30-ի իր հռչակագրով Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը հայտարարեց Խորհրդային Հայաստանի մասը<sup>1</sup>: Սակայն այս խաղերը երկար չտևեցին: Մի քանի ամիս անց Ադրբեջանի ղեկավարությունը կատաղի պայքար սկսեց իր իսկ ընդունած հռչակագրի դեմ:

1921թ. մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև Մոսկվայում կնքվեց «եղբայրության և բարեկամության» պայմանագիր: Այդ պայմանագրով, պատմական Հայաստանի տարածքներից Արևմտյան Հայաստանը, Մուրմալուի գավառը, Կարսի մարզը ճանաչվեցին որպես Թուրքիայի տարածք, իսկ Նախիջևանը և Շարուրը տրվեցին Խորհրդային Ադրբեջանին:

Նույն բախտին արժանացավ նաև Լեռնային Ղարաբաղը: 1921թ. հուլիսի 5-ի Ռ.Կ/բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը, առանց քվեարկության, կամային որոշմամբ Լեռնային Ղարաբաղը հանձնեց Խորհրդային Ադրբեջանին: 1923թ. հուլիսի 7-ին՝ Խորհրդային Ադրբեջանի Կենտգործկոմի ղեկընտրված, ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ: 1924թ. փետրվարի 9-ին Ադրբեջանի կազմում ստեղծվեց Նախիջևանի ինքնավար հանրապետությունը: Այս տարածքներն Ադրբեջանին բռնակցելուց հետո, հանրապետության հայ ազգաբնակչության համար ստեղծվեց նոր վիճակ, որը կարելի է բնութագրել որպես սպիտակ ցեղասպանություն:

Արդեն 1921թ. աշնանը սկսվեց հայ ազգաբնակչության արտահոսքը Ղարաբաղից: Բոլորից շատ հիասթափվել էր հայ մտավորականությունը,

որը հասկանում էր բռնակցված տարածքներում իրականացվող քաղաքականությունը: Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, զիտակցելով, որ բռնակցված տարածքներում հայ ազգաբնակչությունը չի հաշտվի ստեղծված իրավիճակի հետ, սկսեց միջոցներ ձեռնարկել այդ տարածքների ժողովրդագրական վիճակը փոփոխությունների ենթարկելու ուղղությամբ: Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը հասկանում էր, որ առաջին հերթին անհրաժեշտ է վերացնել անմիջական սահմանը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև: Այդ նպատակով ստեղծվեց, այսպես կոչված, «Կարմիր Քուրդիստանը», որն իր մեջ ընդգրկեց Քելբաջարի, Լաչինի շրջանները, որոնք Լեռնային Ղարաբաղը կտրում էին Հայաստանից:

Խորհրդային Ադրբեջանի կառավարության հաջորդ քայլն ուղղված էր Նախիջևանի և Շարուրի հայ գաղթականների դեմ, որոնք ձգտում էին հետ վերադառնալ իրենց բնակավայրերը: 20-ական թվականների սկզբին երկրամասի հայ բնակչության մեծ մասը, որը դարձել էր գաղթական, խնդրագրեր էր ուղղում Խորհրդային Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի պետական կուսակցական մարմիններին՝ խնդրելով լուծում տալ իրենց հարցին:

1917թ. Նախիջևանում ապրում էր 53,9 հազար հայ, որը երկրամասում բնակչության ընդհանուր թվաքանակի շուրջ 40%-ն էր կազմում<sup>2</sup>: Հետագա մի քանի տարիներին Նախիջևանի և Շարուրի հայ ազգաբնակչության թվաքանակը թուրք-ադրբեջանական-խորհրդային հարձակումների հետևանքով զգալիորեն կրճատվեց: Երկրամասի տասնյակ հազարավոր հայեր, որոնք փրկվեցին ցեղասպանությունից, հանգրվան գտան Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի տարբեր վայրերում:

Ադրբեջանի կառավարությունն անեն կերպ արգելք էր հանդիսանում գաղթականների վերադարձին: Ադրբեջանի կառավարության նախագահ Գ. Մուսաբեկովը 1922թ. հունիսի 24-ին Հայաստանի կառավարության նախագահին հղած հեռագրում հաղորդում է, որ Ադրբեջանի Կենտգործկոմի որոշմամբ՝ հայ բնակչության զանգվածային մուտքն իրենց հանրապետության սահմաններն արգելվում է<sup>2</sup>:

Նախիջևանի փախստական հայերի բազմաթիվ դիմումներն Ադրբեջանի և Նախիջևանի իշխանություններին մնում են անպատասխան, և նրանք դիմում են համապատասխան միութենական մարմիններին:

<sup>1</sup> *Shi A. Kavkazskiy kalendar na 1917r., c. 215-221.*

<sup>2</sup> *Հայաստանի Հանրապետության նորագույն պարմության կենտրոնական պետական արխիվ /արխիվներ և ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.123, ց.42, գ.8, ք.13:*

<sup>1</sup> *Shi A. A. Хуршудян, Истина-единственный критерий исторической науки, Ереван, 1989, с. 27-28.*

Այդ կապակցությամբ 1925թ. մարտի 11-ին Նախիջևան է այցելում ԽՍՀՄ ժողովուրդների մախազահ Ալեքսեյ Ռիկովը: Նա Ադրբեջանի կառավարությանը մեղադրեց «համատարած..... այլանդակություն» ստեղծելու մեջ<sup>1</sup>: «Գործադրվեցին վճռական միջոցներ, իշխանության որոշ ներկայացուցիչներ նույնիսկ գնդակահարվեցին»<sup>2</sup>: Մակայն այդ միջոցառումներն էլ չփոխեցին իրավիճակը: 1926թ. մայիսի 6-ին Ադրբեջանի Կենտրոնական ընդունում է որոշում, որտեղ նշվում է, որ «հավասարարական հողաբաշխում իրականացնելու նպատակով... և Նախիջևանի ԽՍՀ սակավահողության պատճառով, արգելվում է Նախիջևանի ինքնավար հանրապետությունում վերաբնակեցնել գյուղատնտեսությանը զբաղվելու համար հողաբաժիններ ստանալ ցանկացողների...»<sup>3</sup>:

Նախիջևանի փախստականների հարցը փակվեց 1926թ. հունիսի 12-ին, երբ, ի պատասխան 1926թ. մարտի 12-ին Ադրկովկասի Կենտրոնականի հարցումների, Ադրբեջանի Կենտրոնականի տվեց բացասական պատասխան: Նույն թվականին անցկացված մարդահամարի տվյալներով, հայերի թիվը կազմում էր 11,3 հազար, որը ողջ բնակչության 10,8%-ն էր<sup>4</sup>: Այսպես, մեկ տասնամյակի ընթացքում Նախիջևանի հայ ազգաբնակչության թիվը նվազեց 42,6 հազար մարդով:

Ադրբեջանի հայության սպիտակ ցեղասպանությունը շարունակվեց հաջորդ տասնամյակներին և ընդգրկեց կյանքի բոլոր ոլորտները: Ինչպես ճիշտ նկատում է Վ. Խոջաբեկյանը, «Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև Ադրբեջանական ԽՍՀ այլ հայաբնակ վայրերում կուտակված ազգային չլուծված շատ պրոբլեմներ իրենց հերթին հակազդել են այդ շրջանների ոչ միայն ժողովրդագրական, այլև սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքի վրա»<sup>5</sup>: Եվ իրոք, մոտ յոթ տասնամյակ Ադրբեջանի հայությունը գտնվում էր ծանր սոցիալ-տնտեսական դրության մեջ: Հայկական ավանները և գյուղերը չեն գտնվել Ադրբեջանի ղեկավար շրջանների ուշադրության կենտրոնում և չէին էլ կարող գտնվել, որովհետև նրանց միակ նպատակը եղել է հայերով բնակեցված տարածքների հա-

յաթափումը: Իրենց նպատակին հասնելու համար Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը խոչընդոտներ էր ստեղծում հայաբնակ տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Տասնամյակներ շարունակ ԼՂԽՄ-ում կապիտալ ներդրումները եղել են չնչին և չէին կարող էական դեր խաղալ արդյունաբերության նյութական և տեխնիկական բազայի ամրապնդման համար: Արդյունաբերական ձեռնարկություններում մեքենասարքավորումները չեն նորացվել, որը հասցվել էր ֆիզիկական ու բարոյական խիստ մաշվածության:

Խիստ ծանր էր Լեռնային Ղարաբաղի շինարարական կազմակերպությունների տեխնիկական հագեցվածության մակարդակը: Ադրբեջանի Բաքու, Սումգայիթ, Կիրովաբադ, Մենգեշաուր քաղաքներից առաջվող շինանյութերը եղել են ցածր որակի և տեղ են հասել ուշացումներով: Շինանյութերի մշտական պակասի հետևանքով Ստեփանակերտում պարապուրդները ամսվա ընթացքում կազմել են 30-40 տոկոս<sup>1</sup>:

Ադրբեջանական գյուղերի համեմատությամբ, հայկական գյուղերը տասնամյակներ շարունակ գրկված են եղել գյուղատնտեսական տեխնիկայից: Նրանց մեծ մասում գյուղատնտեսական աշխատանքները կատարվել են ձեռքով: Չնայած այս ամենին՝ օրինակ, ԼՂԽՄ-ում 1981-1985թթ. տարեկան միջին հաշվով արտադրվել է 145,7 հազար տոննա խաղող, 11 հազար տոննա միս, շուրջ 55 հազար տոննա կաթ:

Ծանր վիճակում էր հաղորդակցության ցանցը: Տասնամյակներ շարունակ ճանապարհները չեն նորոգվել, որի հետևանքով բազմաթիվ գյուղեր կտրված են եղել միմյանցից և շրջկենտրոններից: Տարվա որոշ ամիսներին այդ ճանապարհները եղել են անանցանելի:

Բնակարանային շինարարությունը տարիներ շարունակ ընթացել է շատ ցածր տեմպերով: Կիրովաբաղի հայկական քաղամասում ընդհանրապես չի իրականացվել պետական շինարարություն:

Առողջապահության բնագավառում նույնպես առկա էր ազգային խտրականությունը: Հայկական բազմաթիվ գյուղերում, որոնք գրեթե կտրված էին շրջկենտրոններից, չեն եղել բուժկետեր և առաջին օգնության բացակայության հետևանքով տուժել են շատ մարդիկ:

Ադրբեջանի բազմաթիվ հայ երիտասարդներ և աղջիկներ, ձեռք բերելով բարձրագույն կրթություն, մերժում են ստացել աշխատանքի տեղավորման հարցում ու ստիպված հեռացել են ԽՍՀՄ տարբեր հանրապետություններ: Դա Ադրբեջանի ղեկավարության նպատակային քաղա-

1 «Նորհրդային Ղարաբաղ», 1988, 14 օգոստոսի:

1 Վ. Խոջաբեկյան, Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 74:

2 ՀՀ ՆՊԿՊԱ, ֆի30, ց.6, գ.117, ք.27:

3 Նույն տեղում, էջ 69:

4 Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г., Краткие сводки, вып. IV, с. 127, 128:

5 Վ. Խոջաբեկյան, նշվ. աշխ., էջ 43:



քականությունն էր՝ թույլ չտալ հայ երտասարդությանը հիմնավորվելու իր պատմական Հայրենիքում: Երկտասարդության պարտադրված արտագաղթը հանգեցրեց Ադրբեջանի հայ ազգաբնակչության ծերացմանը: Հանրապետության բազմաթիվ գյուղերում և ավաններում տարեց ազգաբնակչության թիվը կազմում էր մոտ 70 տոկոս:

Այս երևույթները որոշակիորեն ազդում էին հայ ազգաբնակչության բնականոն աճի վրա: Ցածր ծնելիության հետևանքով նվազեց դպրոցներում սովորող աշակերտների ընդհանուր թվաքանակը: Միայն Լեռնային Ղարաբաղում 1970թ. համեմատությամբ 1988թ. դպրոցներում սովորող աշակերտների թիվը պակասեց 13 հազարով<sup>1</sup>:

Մի քանի տասնամյակ շարունակ Ադրբեջանի հայկական դպրոցներում արգելված էր «Հայոց պատմություն» առարկայի դասավանդումը: Ռուսական դպրոցներում, որոնց աշակերտների մեծ մասը հայեր էին, հայոց լեզվի դասավանդման մասին նույնիսկ խոսք լինել չէր կարող:

1970-ական թվականների սկզբներից Ադրբեջանի կառավարության վարած «ազգային քաղաքականության» հետևանքով Բաքվում, Կիրովաբադում, Շաքիում, Շամխորում, Խանլարում, Գաշբեսանում մեկը մյուսի հետևից սկսեցին փակվել հայկական դպրոցները: Արդեն 1980թ. նշված քաղաքներում չէր գործում և ոչ մի հայկական դպրոց:

Մայիտակ ցեղասպանության սլաքը ուղղված էր նաև հայկական մշակույթի դեմ: Խորհրդային իշխանության տարիներին՝ կրոնի դեմ պայքարի պատրվակով, ոչնչացվեցին հարյուրավոր եկեղեցիներ և այլ պատմա-մշակութային արժեքավոր կոթողներ: Լեռնային Ղարաբաղի 1600 պատմական հուշարձաններից որպես արժեք ներկայացնող պաշտոնական փաստաթղթերում ներակայացվել էին 65-ը: Բայց այդ վերջիններս էլ չէին պահպանվում պետության կողմից, ոչ մի միջոց չէր հատկացվում նրանց վերանորոգման ու վերականգման համար: Հայ գիտնականներին չէր թույլատրվում ուսումնասիրություններ կատարել այդ տարածքներում: Արգելված էր նրանց մուտքը Ագուլիս և Ջուղա՝ ուսումնասիրելու տեղի հայկական պատմական հուշարձանները:

Տասնամյակներ շարունակ, հողային, շինարարական աշխատանքներ կատարելու պատրվակով, ոչնչացվեցին Ջուղայի հազարավոր խաչքար-հուշարձաններ: Ադրբեջանցի որոշ գիտնականների լկտիությունը հասավ այնտեղ, որ հայկական կիրառական արվեստի այդ յուրաքանչյուր գանձերը, որոնց մասին հայտնի է ամբողջ գիտական աշ-

<sup>1</sup> «Խորհրդային Ղարաբաղ». 1988, 25 մայիսի. 18 հունիսի:

խարհին, հայտարարվեցին աղվանական: Նույն բախտին արժանացան նաև մի շարք ճարտարապետական հիասքանչ կոթողներ, որոնցից է, օրինակ, Ամարասի նշանավոր եկեղեցին:

Ադրբեջանի կառավարությունը խոչընդոտներ էր ստեղծում հանրապետության հայ մշակույթի գործիչների համար: Ամեն կերպ սահմանափակվում էին ազատ ստեղծագործելու նրանց իրավունքները: Հանրապետության առաջադեմ հայ մտավորականությունն ուղղակի հետապնդվում էր Ադրբեջանի իշխանությունների կողմից: Նրանց՝ հանրապետությունից հեռացնելու նպատակով, պայքար հայտարարվեց «հայ ազգայնականության» դեմ: Հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ հայտնվեցին շատ ծանր պայմաններում: 1960-ական թվականներին, գիտության և մշակույթի մի քանի տասնյակ հայ գործիչներ, ստիպված, հեռացան Լեռնային Ղարաբաղից և Ադրբեջանի այլ քաղաքներից:

Ադրբեջանում հայ բնակչության շահերը ոտնահարող ազգային, քաղաքական, հասարակական, սոցիալական, տնտեսական, մշակութային խտրականությունը չէր կարող չհանգեցնել ժողովրդագրական փոփոխությունների, որին ձգտում էր Ադրբեջանի կոմունիստական ղեկավարությունը:

Վիճակագրական տվյալների օբյեկտիվ վերլուծությունը վառ ապացույց է այն ժողովրդագրական փոփոխությունների, որոնք տեղի ունեցան հայկական տարածքները Ադրբեջանին բռնակցելուց հետո: Լեռնային Ղարաբաղի ներկայիս տարածքում 1913թ. ապրիլում էր մոտ 176 հազար մարդ: 1926թ. մարդահամարի տվյալներով, ազգաբնակչության թվաքանակը նվազեց՝ կազմելով 125,3 հազար մարդ<sup>1</sup>: Ադրբեջանի պաշտոնական տվյալներով, այդ նույն ժամանակաշրջանում մարդի հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 117 հազար մարդ: Մինչև հաջորդ՝ 1939թ. մարդահամարը հայության թվաքանակը աճեց և հասավ 132,8 հազարի<sup>2</sup>: Վիճակագրական տվյալները որոշակիորեն վկայում են, որ երկրամասի հայ ազգաբնակչությունը գտնվում էր բարվոք վիճակում:

Մինչև Երկրորդ աշխարհամարտը, հայ ազգաբնակչության աճի միտումը պայմանավորված էր բնական բավականին բարձր աճով, և արտահոսքը այնքան էլ նկատելի չէր:

<sup>1</sup> НКАО, 50 лет в гружной советской семье, Степанакерт, 1973, с. 32-33.  
<sup>2</sup> Всесоюзная перепись населения 1959г. Азербайджанской ССР, М., 1963, с. 140.

Միգրացիոն գործընթացի հետևանքները պետք է իրենց զգացնել տալին ավելի ուշ, երբ, իրոք սկսվեց հայ ազգաբնակչության թվաքանակի նվազում: Եթե 1923թ. հայ ազգաբնակչությունը Լեռնային Ղարաբաղում կազմում էր 94,4 տոկոս, ապա 1979թ. մարդահամարի տվյալներով միայն 75,9 տոկոս<sup>1</sup>: Ընդհանուր առմամբ 1926 և 1970 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում հայ ազգաբնակչության թվաքանակը ավելացավ 11,4 հազարով: Բնական աճի հավասար պայմաններում Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցի ազգաբնակչության թվաքանակը ավելացավ՝ 24,7 հազարով:

Նույն գործընթացը՝ ավելի վատ հետևանքներով, տեղի էր ունենում Նախիջևանում: 1926-1979թթ. ընթացքում Նախիջևանի Խորհրդային Ինքնավար հանրապետության բնակչության 229,2 տոկոս ընդհանուր աճի պայմաններում ադրբեջանցի բնակչությունը ավելացավ 2,6 անգամ, իսկ հայ բնակչությունը կրճատվեց 3,3 անգամ<sup>2</sup>, իսկ մինչև 1988թ. բռնագաղթը այնտեղ ապրում էր մոտ 1,5 հազար հայ: Խորհրդային իշխանության տարիներին 44 հայաբնակ գյուղերից 1988 թվականին միայն Ազնաբերդն էր բնակեցված հայերով:

Խորհրդային իշխանության տարիներին ամբողջ Ադրբեջանում հայ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակը կրճատվեց 6,7 տոկոսով:

Հայերի արտահոսքը Ադրբեջանից զանգվածային բնույթ ընդունեց 1970-1979թթ. միջև ընկած ժամանակաշրջանում: Այդ տարիներին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքից հարկադրաբար հեռացան 82 հազար հայեր<sup>3</sup>: Հետագա տասնամյակում իրավիճակը չփոխվեց, և հայության արտահոսքը Ադրբեջանից ընդունեց ավելի մեծ չափեր: Այսպիսով, Ադրբեջանի «ինտերնացիոնալ» հանրապետությունը քայլ առ քայլ իրականացրեց իր առջև դրված նպատակը: Ունահարվեց իր պատմական Հայրենիքում ապրելու և բարգավաճելու ոչ թե առանձին մարդկանց, այլ մի ամբողջ ժողովրդի իրավունքը:

Ադրբեջանի վարած այդ քաղաքականությունն, իհարկե, նորություն չէր: Նման քաղաքականություն վարում էր Օսմանյան կայսրությունը, իսկ այսօր՝ ժամանակակից Թուրքիան: Դա պանթուրքիզմի անկյունա-

քարերից մեկն էր, որ տասնամյակներ շարունակ, քողարկվելով «սոցիալիստական ինտերնացիոնալիզմի» շղարշով, իրականացնում էր պաշտոնական Ադրբեջանը: Թե՛ անցյալում, և թե՛ այսօր իրականացման մեթոդները, ճանապարհները, եղանակները նույնն էին:

Խորհրդային բռնապետությունը Ադրբեջանում պանթուրքիզմի համար զսպողական շապիկի դեր էր կատարում: Այդ գաղափարախոսությունն իրեն պետք է զգացնել տարի որոշակի պայմաններում, որպիսին դարձավ գորբաշովյան վերակառուցման ժամանակաշրջանը: Սոցիալիստական հասարակարգի ստատուս անկումը, սոցիալիզմի գաղափարախոսության սնանկացումը խոր նիրհից այրենացրեց ԽՍՀՄ ժողովուրդներին: Չլուծված բազմաթիվ սոցիալ-տնտեսական, քաղաքական և առավելապես ազգային խնդիրներ շարժման մեջ դրեցին Խորհրդային միության միլիոնավոր քաղաքացիների, տարբեր ժողովուրդների և ազգերի:

Առաջինն իր ազգային արժանապատվությունը պաշտպանելու կանգնեց արցախահայությունը, որը տասնամյակներ շարունակ չէր հաշտվել և չէր կարող հաշտվել իր պատմական տարածքներն Ադրբեջանին բռնակցելու հանգամանքի հետ:

Արցախահայությունը, հավատալով ԽՍՀՄ ղեկավար Մ. Գորբաչովի հայտարարած վերակառուցման քաղաքականությանը, պայքար սկսեց սահմանադրական ճանապարհով իր Մայր Հայրենիքի՝ Հայաստանի հետ վերամիավորվելու համար: Մակայն՝ ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը, չցանկանալով լուծում տալ այդ խնդրին, Արցախում և Հայաստանում ընթացող բազմամարդ հանրահավաքները որակեց սադրիչ, ծայրահեղական, մի խումբ ազգայնականների պահանջ և գործ:

Պատեհ առիթ էր ստեղծվել Ադրբեջանի համար՝ վերակենդանացնելու պանթուրքիզմի դոկտրինան և գործնականում իրականացնել այն: Նորից որերորդ անգամ այդ քաղաքականության ճանապարհին կանգնած էր բովանդակ հայությունը: Այդ խոչընդոտը վերացնելու համար պետք չէր նոր բան հնարել: Կար փորձված մեթոդ՝ հայերի ցեղասպանությունը: Նախ, այդ փորձված և իրեն արդարացրած ձևն անհրաժեշտ էր ինչ-որ չափով նորից փորձարկել՝ հանոզվելու համար, թե ինչպիսի արձագանք այն կտանի երկրում և աշխարհում:

1988 թ. փետրվարի 27-29-ը Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից ոչ հեռու գտնվող արդյունաբերական Սումգայիթ քաղաքում իրականացվեց քաղաքի հայության ցեղասպանությունը: Արդյունքում զոհվեցին մի քանի տասնյակ հայեր, մոտ 200 մարդ վիրավորվեց: Այդ ջարդերից հետո

1 ЗСФСР в цифрах, Тифлис, 1929, с. 3. *Sh'i ash* Численность и состав населения СССР, М., 1984, с. 126.

2 Նույն փեղում:

3 Վ. *Խոջաբեկյան*, *Եզվ. աշխ.*, էջ 79:

4 «Коммунист», 1989, 19 декабря.

քաղաքի 18 հազար հայ ազգաբնակչությունը, ստիպված բռնեց, գաղթի ճանապարհը: Պաշտոնական աղբյուրների վկայությամբ, գոների թիվը կազմել է 26 մարդ, սակայն մինչև օրս ստույգ հնարավոր չէ պարզել խաժամուժ գազանի կրքին գոհ դարձած մարդկանց ճշգրիտ թիվը:

Սումգայիթյան փախստականների վկայությամբ՝ հայերի կոտորածը եղել է լավ կազմակերպված: Դա է վկայում այն հանգամանքը, որ խաժամուժը զինված է եղել քաղաքի գործարաններում վաղօրոք պատրաստված դանակներով, սրածայր մետաղաձողերով: Նախօրոք մարդասպաններին հայտնվել են քաղաքում բնակվող հայերի հասցեները: Կոտորածի օրերին հայերի բնակարաններում անջատվել են հեռախոսները: Կոտորածին նախորդող ժամերին հանրահավաքում խոսել և երբը գլխավորել են քաղաքի կուսակցական կոմիտեի առաջին և երկրորդ քարտուղարները: Քաղաքի իրավապահ մարմինները երեք օր մատնված են եղել անգործության: Վերջին օրը քաղաք մտած խորհրդային զինվորների աչքի առջև կատարված բազմաթիվ սպանություններ չեն կանխվել նրանց կողմից:

Սումգայիթյան հանցագործության երկրորդ փուլն՝ այդ կոտորածի հետքերի վերացումն էր, որը կատարվեց շատ արագ և ոչ առանց կենտրոնի օգնության: Միութենական պաշտոնական լրատվական միջոցները ջանք ու եռանդ չէին խնայում, որ տեղի ունեցածը ներկայացնեն մի խումբ խուլիգանների արարք: Սումգայիթում հայերի ցեղասպանությանը նման որակում տվեց նաև երկրի ղեկավարությունը: Կատարվածին չտրվեց քաղաքական գնահատական: Իրականությունը թաքցվեց երկրի ժողովրդից:

Հաջորդ փուլը կապված էր սումգայիթյան ցեղասպանության դատավարության հետ: Ռուպեսզի չբացահայտվեն ցեղասպանության իրական կազմակերպիչները և հաստատվի պաշտոնական վարկածը, դատավարությունն աղճատվեց:

Խորհրդային միության մի քանի քաղաքներում տեղի ունեցան առանձին դատավարություններ, որի արդյունքում՝ մեղադրվեցին ջարդերին մասնակցած մի քանի մարդ, իսկ իրական կազմակերպիչը՝ Ադրբեջանի ղեկավարությունը, մնաց անպատիժ: Այն, որ ցեղասպանության կազմակերպիչը Ադրբեջանի կուսակցական և պետական ղեկավարությունն էր, կասկածից վեր է: Դեռ մինչև դարաբաղյան դեպքերի ծավալումը, Ստեփանակերտում կայացած կոմկուսի մարզային բյուրոյի նիստում, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի բաժնի վարիչի տեղակալ Ասադովը հայտարարեց, որ 100 հազար աղբյուրներում ամեն ինչ պատ-

րաստ են մտնել Ղարաբաղ և սպանող սարքեր!՝ Փետրվարի 20-ից հետո Ադրբեջանի հեռուստատեսությունը և ռադիոն աննախադեպ հակահայկական վայնասուն բարձրացրեցին, որին մասնակցում էին հանրապետության կուսակցական և պետական մի շարք գործիչներ:

Սումգայիթի հայության ցեղասպանությունը բռնեց իր քննությունը՝ անպատժելիության սինդրոմը, նպաստեց հետագա դեպքերի զարգացմանը: Ադրբեջանի տարբեր վայրերում հայերը սկսեցին հարձակման ենթարկվել աղբյուրների կողմից: Արդեն 1988 թ. մայիսին՝ Շուշիի կուսըջկոմի նախաձեռնությամբ, սկսվեց հայերի բռնագաղթ քաղաքից: Մեպտեմբերին արյունալի դեպքեր տեղի ունեցան Խոջալու գյուղում, իսկ Շուշիի անբոյջ հայ ազգաբնակչությունը վտարվեց քաղաքից:

Բռնությունների հաջորդ ալիքը սկսվեց 1988 թ. նոյեմբերին:

Զանգվածային հարձակումների ենթարկվեցին Կիրովաբադի, Մինգեչաուրի, Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի, Վարդաշենի, Շեքիի հայ ազգաբնակչությունը: Առավել ուժեղ հարձակման ենթարկվեց Կիրովաբադի հայությունը: Երկու շաբաթ շարունակ, հայկական թաղամասի եկեղեցում հավաքված հայությունը դիմադրություն ցույց տվեց աղբյուրների անբոյջի: Քաղաք մտցվեցին զինվորական ստորաբաժանումներ, որոնք, նույնպես ենթարկվելով հարձակման, ունեցան սպանվածներ և վիրավորներ: Նոյեմբերի վերջերին, դեկտեմբերի սկզբներին վերը նշված քաղաքների և հայկական գյուղերի հայ ազգաբնակչությունը, հարկադրաբար, բռնեց գաղթի ճանապարհը: Տեղահան արվեց Նախիջևանի հայկական վերջին՝ Ազնաբերդ գյուղի բնակչությունը: Բռնագաղթածների մեծ մասը չկարողացավ իր հետ դուրս բերել ունեցվածքը և այն թալանվեց աղբյուրների կողմից:

Նույնիսկ այդ ժամանակ, կենտրոնը, չցանկանալով ըմբռնել տեղի ունեցած երկույթները, ձևական որոշումներ էր ընդունում՝ բռնագաղթվածներին հետ վերադարձնելու իրենց բնակության նախկին վայրերը: Անգամ երկրի բարձրագույն իշխանության մարմինը՝ Ժողովրդական պատգամավորների համագումարը, ի զորու չեղավ պորբեմին լուծում տալ: Կենտրոնի բռնած հանդուրժողական դիրքը հայերի ցեղասպանության և բռնագաղթի նկատմամբ՝ հանգեցրեց արյունալի ընդհարումների թուրքմենիայում, Ֆերգանայում, Նոր Ուզբեկստան և մի շարք այլ վայրերում: Դրանք բոլորը ապացույց էին, որ ազգային հարցը պահանջում է անմիջական և արագ լուծում:

Հայության հանդեպ բռնություններն Ադրբեջանում շարունակվեցին

1 «Աբրոզ», 1988, N 10.

նաև 1989 թվականին: Հուլիս-օգոստոս ամիսներին դարձյալ սկիզբ առավ մեծ բռնագաղթ: Ադրբեջանում նորից սովորական դարձան հայ ազգաբնակչության սովորական վաճառքներին հարածելու, մինչև ուշագնացության աստիճան ծեծելու, դանակահարելու, խոշտանգելու դեպքերը: Այդ օրերին Կիրովաբադի հայկական քաղամասում հրկիզվեցին հայերին պատկանող հարյուրավոր տներ: Այս դեպքերը հանգեցրին 1990 թ. հունվարյան իրադարձություններին: 1990 թ. հունվարի 13-20-ը Բաքվում, ժողովրդական ճակատը՝ Ադրբեջանի կառավարող շրջանների հետ, ձեռնարկեց մի նոր ցեղասպանություն, որը Ադրբեջանում հայերի ցեղասպանությունն ավարտին հասցնելու ամենավճռական փուլը եղավ: Խորհրդային Ադրբեջանի կենտրոնական իշխանությունները դեն էին նետել ինտերնացիոնալիստի դիմակը, հրահրում և ընթացք էին տալիս արյունահեղություններին: Կազմակերպչական առումով՝ Մումգայիթը գուր չէր անցել: Բաքվի հայության կոտորածը կազմակերպված էր նույն եղանակով, ինչ որ դրան նախորդող ցեղասպանությունը: Եթե առաջին դեպքում՝ 1988 թ., իրավապահ մարմինները չէին միջամտում բարբարոս ամբոխի գործողություններին, ապա այս դեպքում իրենք անմիջական մասնակցություն էին ցուցաբերում ջարդերին:

Մեկ շաբաթ շարունակ երկրի պաշտոնական լրատվական միջոցները սկզբում թաքցնում, ապա կցկտոր տեղեկություններ էին հաղորդում Բաքվում կատարվող հայերի ցեղասպանության մասին: Եթե Մ. Գորբաչովի հայտարարության համաձայն՝ բանակը Մումգայիթ մտավ «երեք օր ուշացումով», տվյալ դեպքում այն Բաքու մտավ մեկ շաբաթ ուշացումով: Հնարավոր է, որ բանակը նույնիսկ Բաքու չմտներ, եթե արյան ծառավից մոլեգնած ցեղասպան թուրքը չհարձակվեր քաղաքի ռուս ազգաբնակչության, զինվորական զորամասերի վրա և եթե Ադրբեջանում անմիջական վտանգ չսպառնար խորհրդային կարգերին:

Այս անգամ նույնպես, պաշտոնական լրատվական միջոցները փորձեցին կոծկել հայության սպանող և հայտարարեցին, որ զոհվել են 100-ից ավելի հայեր: Ամենայն հավանականությամբ, ինչպես Մումգայիթում, այնպես էլ Բաքվում, զոհ գնացած հայերի թվաքանակը հնարավոր չէ պարզել:

Կոտորածը ուղեկցվում էր հրկիզումներով և թալանով: Բաքվի հունվարյան կոտորածից հետո «ինտերնացիոնալ» քաղաքը մաքրագարվեց 200 հազար հայերից, որոնք ապաստան գտան Հայաստանում և ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում: Բաքվի արյունալի դեպքերից հետո Ադրբեջանի տարածքում այլևս հայ չմնաց:

ԽՍՀՄ տարբեր պաշտոնական ատյաններում ամիսներ շարունակ քն-

նարկվում էր ոչ թե հայերի ցեղասպանությունը Բաքվում, այլ խորհրդային վոյքի մուտքը քաղաք և ընդհարումները ադրբեջանցիների հետ:

1988-1990 թթ. հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում մեկ անգամ ևս ապացուցեց, որ պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունը խոր արմատներ էր գցել հանրապետությունում: Սկսած 1960-ական թվականներից մինչև վերջին հայտնի իրադարձությունները, Ադրբեջանի գիտնականները, նենգափոխելով հայոց և հարևան ժողովուրդների պատմությունը, յուրացնելով նրանց միջնադարյան մշակութային արժեքները՝ երիտասարդությանը դաստիարակում էին պանթուրքիզմի ոգով, հայ և հարևան ժողովուրդների տարածքները համարում էին ադրբեջանական: Այսպիսով, գաղափարապես նախապատրաստվում էր «մեծ Ադրբեջանի» և Թուրանի ստեղծումը: Պատահական չէ, որ Ադրբեջանը բարոյական, ֆինանսական, ռազմական օգնություն է ստանում Թուրքիայից: Թուրքական քաղաքական գործիչները ամեն կերպ օժանդակում են Ադրբեջանի կայացմանը՝ որպես թուրքական համադաշնության մի օղակ: Ադրբեջանը, ինչպես 70 տարի առաջ, կարևոր տեղ է զբաղեցնում «մեծ Թուրանի» ճանապարհին: 1988 թ. թուրքական «Միլլետթ», թերթը գրում էր. «Մեզ համար կարևորը թուրքական դրոշմերի հայտնվելն էր վերջին ադրբեջանական հանրահավաքներում»<sup>1</sup>: Մեկ այլ թերթ նշում էր, որ ադրբեջանցիները թուրքեր են, իսկ Ադրբեջանում ձեռքից ձեռք է անցնում Մեծ Թուրքիայի քարտեզը<sup>2</sup>: Պանթուրքիզմը ավելի վառ արտահայտություն գտավ Ադրբեջանում ազգային ճակատ ստեղծելուց հետո: Նրա ղեկավարներից մեկը, Թուրքական «Ալ Բայան» թերթին տված հարցազրույցում ասաց, որ իրենց նպատակը ադրբեջանական թուրքական դեմոկրատական հանրապետության ստեղծումն է<sup>3</sup>: Ազգային ճակատի հեռու գնացող նպատակների ապացույցն են նրանց առաջնորդների բազմաթիվ հայտարարությունները, որ պատմական (Իրանական) Ադրբեջանն իրենց տարածքն է: Ազգային ճակատի գաղափարախոսներից մեկի հայտարարությամբ՝ Ադրբեջանը, Կիրգիզիան, Ղազախստանը, Բաշկիրիան, Պովոլժիեն, Թաթարիան, Յակուտիան, Ղրիմը և Հյուսիսային Կովկասը թուրքական հողեր են և իրենք այն որևէ մեկին չեն զիջի<sup>4</sup>:

1 «Коммунист», 1990, 6 января.

2 Տես նույն փեդում:

3 Տես նույն փեդում:

4 «Согласие», 1989, N 18.

Աղբբեջանում իրականացված ցեղասպանության գործում իր մեղքի բաժինն ունի ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը, որը սչ միայն չկանխեց, այլև գրեթե ոչ մի միջոց ձեռք չառավ հայությանը փրկելու: Ջորբբերը միշտ հայտնվում էին այն պահին, երբ մոլեռանդ ամբոխը ավարտում էր իր գործը:

Անհեթեթ հայտարարությունները չէին կարող չծնել նոր հանցագործություններ: Դեռ ավելին, սկսած 1991 թ. ապրիլի 30-ից, երեք ամիս շարունակ, պետությունն ինքը՝ զինված ուժերի միջոցով իրականացրեց հայության կոտորածն ու բռնագաղթը Գետաշենի ենթաշրջանում, Շահունյանում և Արցախում: 24 հայկական գյուղեր հայաթափվեցին, զոհվեցին շատ մարդիկ: Ամբողջ հայ-աղբբեջանական սահմանի երկայնքով հարձակման ենթարկվեց նաև Հայաստանի տարածքը: Այդ հարձակման ժամանակ զոհվեցին և գերեվարվեցին իրենց հողը պաշտպանող ազատամարտիկներ, միլիցիայի աշխատակիցներ, բազմաթիվ գյուղացիներ: Դա արդեն ագրեսիա էր պետության կողմից<sup>1</sup>:

Այսպիսով, ընդհանրացնելով ուսումնասիրության արդյունքները, անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալը.

1. Հայերի ցեղասպանությունը Աղբբեջանում հանդիսանում է Թուրքիայում արևմտահայության եղեռնի շարունակությունը:
2. Հայերի ցեղասպանությունը Աղբբեջանում կրել է շարունակական բնույթ, և սպիտակ ցեղասպանության հետ մեկտեղ, շարունակվել է ավելի քան 70 տարի:
3. Ցեղասպանության կազմակերպիչ են հանդիսացել Աղբբեջանի մուսավաթական, ապա նաև՝ կոմունիստական կառավարությունները: Հայության ցեղասպանությունը Աղբբեջանում իրականացվեց պանթուրքիզմի, համաշխարհային հեղափոխության, «սոցիալիստական ինտերնացիոնալիզմի» կարգախոսների ներքո:

---

<sup>1</sup> *Определение агрессии Генеральной Ассамблеей ООН от 4 декабря 1974г., с. 5, п.1.*